

Partnership for Good Governance



Եվրոպական միության/Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն՝ հանուն արդյունավետ կառավարման» ծրագրի շրջանակում իրականացվող ծրագրերի արդյունքները¹

Ի՞նչ է «Գործընկերություն՝ հանուն արդյունավետ կառավարման» ծրագիրը

2014թ. ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնել են իրականացնել համագործակցության թիրախային միջոցառումներ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների հետ՝ մերձեցնելու համար այդ երկրները մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության ոլորտներում գործող եվրոպական չափանիշներին: «Գործընկերություն՝ հանուն արդյունավետ կառավարման» ծրագրի շրջանակում իրականացվող ծրագրերը հիմնականում ֆինանսավորվել են ԵՄ-ի կողմից և համաֆինանսավորվել ու իրականացվել են Եվրոպայի խորհրդի կողմից:

Բացի 14 տարածաշրջանային ծրագրերից, **հատուկ Հայաստանի համար գործում են հինգ ծրագրեր՝ ընդհանուր 2.4 միլիոն եվրո բյուջեով:**

Հայաստանյան քրեակատարողական հիմնարկներում առողջապահության և մարդու իրավունքների ամրապնդում

Ծրագիրն իրականացվել է 2015 թվականի մարտից մինչև 2017 թվականի հուլիսը

- ▶ Քրեակատարողական հիմնարկներում առողջապահական համակարգի օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակը բարելավվել է 2017 թվականի հունվարի 19-ին «Հայաստանի Հանրապետությունում բժշկական ծառայությունների արդիականացման մասին» հայեցակարգի ընդունմամբ և հայեցակարգի առաջարկությունների հիման վրա օրենսդրական փոփոխությունների առաջարկների ընդգրկումն փաթեթի ներկայացմամբ:
- ▶ Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցները կատարելագործել են իրենց հմտությունները և ընդլայնել են իրենց գիտելիքները քրեակատարողական հիմնարկների 775

¹Նախկինում հայտնի էր որպես «Եվրոպայի խորհրդի/Եվրոպական միության Ծրագրային համագործակցության կառուցակարգ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար»

աշխատակիցների (բժշկական անձնակազմ և քրեակատարողական հիմնարկների այլ աշխատողներ) համար կազմակերպված վերապատրաստման միջոցով: Թեմաները՝ «Առողջության խթանումը» և «Բժշկական էթիկա»: Դասընթացները վարել են Ծրագրի շրջանակում համալրված տեղացի մի շարք դասընթացավարներ՝ Ծրագրի շրջանակում մշակված վերապատրաստման նյութերի հիման վրա:

- ▶ Բուժկետերի նյութական պայմանները Հայաստանի բոլոր տասնմեկ քրեակատարողական հիմնարկներում նշանակալիորեն արդիականացվել է՝ բժշկական սարքավորումների տրամադրման շնորհիվ:
- ▶ Հզորացել են ներպետական մարմինների վերապատրաստման կարողությունները՝ կապված այն հանգամանքի հետ, որ ուսումնական ծրագիր է մշակվել բուժանձնակազմի մասնագիտական զարգացման նպատակով:
- ▶ Հոգեկան առողջության բուժսպասարկումը բարելավվել է քրեակատարողական հիմնարկներում աշխատող 15 (տասնհինգ) հոգեբանների վերապատրաստման շնորհիվ: Ներկայացվել են նաև առաջարկություններ քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության բարելավման ուղղությամբ, որին նախորդել է Եվրոպայի խորհրդի խորհրդատուների կողմից իրականացված գնահատում:
- ▶ Արդարադատության նախարարության, քրեակատարողական ծառայության և հայաստանյան քաղաքացիական հասարակության տասնհինգ ներկայացուցիչներ հաղորդակից են եղել միջազգային նոու-հաուին՝ Իսպանիա, Շվեդիա և Դանիա կատարած ուսումնական այցերի շնորհիվ:

Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ

Ծրագիրն իրականացվում է 2015 թվականի հուլիսից մինչև 2017 թվականի դեկտեմբերը ([լրացուցիչ տեղեկություններ](#))

- ▶ Փորձագիտական օժանդակություն է տրամադրվել՝ Քրեական դատավարության և Քրեական օրենսգրքերի նախագծերը, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Սահմանադրական դատարանի և Դատախազության մասին օրենքները մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին ներդաշնակեցնելու համար:
- ▶ Արդարադատության ակադեմիայի համար մշակվել է քննիչների համար նախատեսված մարդու իրավունքների թեմաներով ուսումնական ծրագիր՝ հինգ վերապատրաստման մոդուլների ներառմամբ.
 - ▶ Քրեական գործի քննության ընդհանուր մեթոդաբանությունը
 - ▶ Խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունների քննությունը և կյանքի իրավունքին առնչվող գործերը
 - ▶ Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ գործերի քննությունը

- ▶ Մինչդատական կալանքը և քրեական գործի քննության հարակից խնդիրները
- ▶ Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում
- ▶ Կազմվել է 22 մասնագետներից կազմված խումբ, որոնք դասավանդել են այս մոդուլները Արդարադատության ակադեմիայում 2016 և 2017 թվականներին:
- ▶ Հրապարակվել է ձեռնարկ ապացույցների թույլատրելիության մասին:
- ▶ 2016-2017 թթ. մարդու իրավունքների թեմաների շուրջ վերապատրաստվել են ընդհանուր թվով 445 քննիչ և 52 քննիչի թեկնածու:
- ▶ Հզորացվել են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունները և բարելավվել է գրասենյակի աշխատակազմի այդ թվում՝ Ազգային կանխարգելիչ մեխանիզմի մասնագիտական պատրաստվածությունը:

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար

Ծրագիրն իրականացվում է 2015 թվականի հունվարից մինչև 2017 թվականի դեկտեմբերը ([լրացուցիչ տեղեկություններ](#))

- ▶ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) ուսանողների, վարչական և ակադեմիական աշխատակազմի համար մշակվել են տիպային Էթիկայի կանոնագրքեր: Վերապատրաստում են անցել 15 հիմնական ԲՈՒՀ-երի աշխատակիցներ Էթիկայի կանոնագրքերի և ԲՈՒՀ-երի քաղաքականությանն առնչվող այլ համապատասխան փաստաթղթերի մշակման առնչությամբ: Նման փաստաթղթերի շարքին են պատկանում շահերի բախման, ահազանգող անձանց պաշտպանության, ակադեմիական ազնվության մասին ներբուհական ակտերը և այլ փաստաթղթերը: Փորձագիտական օժանդակություն է տրամադրվել 5 պիլոտային ԲՈՒՀ-երի աշխատակիցներին՝ Էթիկայի կանոնագրքերի և դրանց հետ փոխկապակցված ներբուհական ակտերի մշակման ընթացքում:
- ▶ Քաղաքացիական հասարակության և Կրթության ու գիտության նախարարության մասնակցությամբ մշակվել է երեք գործիքակազմ, այդ թվում հաշվետվություններ ներկայացնելու և գնահատում կատարելու համար տիպային նմուշներ: Գործիքակազմերը նախատեսված են դասախոսների, ուսանողների և համալսարանի աշխատակիցների համար: Դրանք ուղղված են բարձրագույն կրթության կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության, մարդկային ռեսուրսների կառավարման, ուսանողների գնահատման և ուսումնական ծրագրերի մշակման ապահովմանը: Դրանք ուսանողների և դասախոսների համար հնարավորություն են ստեղծում «ահազանգել», եթե առաջանում է կոռուպցիայի կամ այլ իրավախախտման կասկած: Այդ գործիքակազմերի իրականացման վերաբերյալ վերապատրաստում են անցել 15 հիմնական ԲՈՒՀ-երի աշխատակիցներ:
- ▶ Հենվելով բարձրագույն կրթության կառավարման ոլորտում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը խթանող գործիքակազմի վրա՝ մշակվել է առցանց հաշվետվությունների ներկայացման հարթակ, որը կոչվում է *Կառավարման ոլորտում*

թափանցիկության և հաշվետվողականության ապահովում (<https://etag.emis.am>): 15 ԲՈւՀ-երի աշխատակիցներ վերապատրաստում են անցել դրա կիրառման վերաբերյալ:

- ▶ Քաղաքացիական հասարակության չորս կազմակերպություններ իրականացրել են իրազեկության բարձրացման քարոզարշավներ հանրության և հիմնական շահագրգիռ կողմերի համար՝ Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բարեվարքության և կոռուպցիոն ռիսկերի մասին: Այն իրականացվել է փոքր դրամաշնորհների ծրագրի միջոցով:

Երկարաժամկետ ընտրական աջակցություն Հայաստանում ընտրությունների հետ առնչվող շահագրգիռ կողմերին

Բաղադրիչ 1 (Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով՝ Վենետիկի հանձնաժողով)

Ծրագիրն իրականացվում է 2015 թվականի հունվարից մինչև 2017 թվականի դեկտեմբերը

- ▶ Քաղաքական կուսակցությունների օրենսդրության նախագծի վերաբերյալ եզրակացություն է տրամադրվել Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից: Ընդունված նախագծում հաշվի են առնվել մի շարք առաջարկություններ, որոնց շնորհիվ կազատականացվի Հայաստանում քաղաքական կուսակցությունների ստեղծումը և գրանցումը:
- ▶ Վենետիկի հանձնաժողովի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվել է հինգ շաբաթ տևողությամբ երկարաժամկետ իրավական օժանդակություն նոր Ընտրական օրենսգիրքը միջազգային և եվրոպական չափանիշների համաձայն իրականացնելու առնչությամբ՝ նախքան խորհրդարանական ընտրությունները, որոնք տեղի ունեցան 2017 թվականի ապրիլի 2-ին:
- ▶ 2017 թվականի փետրվար և մարտ ամիսներին Վենետիկի հանձնաժողովի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տարածքային ընտրական հանձնաժողովների ու քաղաքական կուսակցությունների վստահված անձանց համար կազմակերպվել են մի շարք աշխատաժողովներ և դասընթացներ ընտրական վեճերի լուծման վերաբերյալ: Ավելի քան 108 մարդ է վերապատրաստում անցել: Արդյունքում հզորացվել են հանձնաժողովների և կուսակցությունների անդամների և աշխատակիցների, ինչպես նաև ընտրական գործընթացում ներգրավված այլ համապատասխան կողմերի կարողությունները, ինչը թույլ տվեց, ընդհանուր առմամբ, առավել լավ իրականացնել ընտրական վարչարարությունը և, մասնավորապես՝ զգալիորեն բարելավեց ընթացակարգերը ընտրությունների օրը:

2-րդ բաղադրիչ

Ծրագիրն իրականացվել է 2016 թվականի հունվարից մինչև 2017 հունիսը:

- ▶ Վերլուծվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿՀՀ) վերապատրաստման ծրագրերը, ինչպես նաև հաղորդակցության գործելակերպերը: Համապատասխան

փորձագետների զեկույցները ուղեցույց են ծառայել՝ բարելավելու ԿԸՀ վերապատրաստման մեթոդաբանությունը (տեխնիկաների արդիականացում, թարմացված ուսումնական նյութեր, դասավանդողների համար թափանցիկ և ստանդարտացված ընտրության չափանիշներ, համակարգված գնահատում) և ներքին ու արտաքին հաղորդակցության ռազմավարությունը (ներքին օգտագործման տեղեկագիր, սոցիալական մեդիայի կիրառում, հաղորդակցության նոր գործիքների ներմուծում):

- ▶ Միջազգային չափանիշների համաձայն վերապատրաստվել են մոտավորապես 300 տեղական դիտորդներ: Գյումրիում և Վանաձորում տեղի ունեցած տեղական ընտրությունների, խորհրդարանական ընտրությունների և Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ժամանակ ծրագրով իրենց մասնակցությունն են ցուցաբերել համապատասխանաբար 200, 250 և 150 տեղական դիտորդներ: Ընտրությունների դիտորդական աշխատանքների արդյունքները վերլուծվել են, հրապարակվել առանձին զեկույցների տեսքով և ներկայացվել ընտրությունների հետ առնչվող շահագրգիռ կողմերին պաշտոնական հանդիպումների ընթացքում:
- ▶ Վերապատրաստվել են մոտ 310 քաղաքականապես ակտիվ կանայք՝ նպատակ հետապնդելով խթանել նրանց մասնակցությունը տեղական ընտրությունների ժամանակ (նրանցից 50-ը ընտրվել է որպես ավագանու անդամ): Ընտրվելուց հետո՝ մոտ 150 կին համայնքապետեր և ավագանու անդամներ մասնակցել են առաջնորդության դպրոցների դասընթացներին և աշխատաժողովներին՝ ընդլայնելու համար իրավական և քաղաքական ոլորտի իրենց գիտելիքները:
- ▶ Ավելի քան 50 հետաքննող լրագրողներ վերապատրաստում են անցել ընտրությունների անկողմնակալ լուսաբանման և ընտրությունների ժամանակ ԶԼՄ-ներին վերաբերող միջազգային չափանիշների մասին: Դրանից հետո ստեղծվել է թեժ գիծ, և տեղական ու խորհրդարանական ընտրությունների ժամանակ իրենց մասնակցությունն են ցուցաբերել լրագրողների շրջիկ խմբեր, որոնց ժամանակ անկախ լրատվամիջոցների կողմից հաղորդագրություններ են տարածվել ավելի քան 100 դեպքերի մասին՝ պատշաճ լուծում ստանալու համար:
- ▶ Առաջին անգամ քվեարկողների համար կրթական քարոզարշավի շրջանակում ավելի քան 30 000 աշակերտ է մասնակցել դերախաղ ընտրությունների՝ ամբողջ երկրի տարածքում, որոնց ընթացքում նրանք հնարավորություն են ստացել փորձել իրենց դերը որպես քաղաքացի ընտրական գործընթացներում:
- ▶ Երկու համազգային համաժողովների ընթացքում հարթակ է ստեղծվել ընտրական տարբեր շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ երկխոսության համար՝ միջազգային ընտրական դիտորդական առաքելությունների առաջարկներին համապատասխան լուծումներ տալու հարցերով, ինչպես նաև թե ինչ սահմանափակումներ և խնդիրներ են առաջացել նախորդ ընտրությունների ժամանակ և ինչ լավագույն գործելակերպեր կան, որոնք կարելի է կիրառել Հայաստանում տեղի ունենալիք հետագա ընտրություններում:

Աջակցություն Հայաստանում ընթացող դատական բարեփոխումների իրականացմանը

Ծրագիրն իրականացվում է 2017 թվականի հունիսի 15 -ից մինչև 2018 թվականի մայիսը:

- ▶ Արդարադատության նախարարությանը տրամադրվել է օժանդակություն՝ մշակելու փոփոխված սահմանադրությունից բխող օրենսդրական ակտեր, մասնավորապես՝ դատական օրենսգիրքը, քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և այլ հարակից ակտեր:
- ▶ Խրախուսվել է հաշտարարության և արբիտրաժի կիրառումը Հայաստանում՝ որպես վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմներ՝ հաշտարարների և արբիտրների ինքնակառավարվող կազմակերպությունների կարողությունները հզորացնելու միջոցով:
- ▶ Կկիրամլի արդարադատության հասանելիության մասին կարիքների գնահատման զեկույց՝ Հայաստանի դատական համակարգի գործունեության մասին հանրային իրազեկման մակարդակը բարձրացնելուն ուղղված պիլոտային ծրագրերի համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս <http://partnership-governance-eu.coe.int>

Կոնտակտային անձ՝ Նիկոլա Հոուսն, Հաղորդակցության հարցերով աշխատակից, +33 3 88 41 22 39

Մեպտեմբեր, 2017 թ.